ՀԵՍՈՒՐԱՆԱԳԱՆՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆ
(1866-1931)

Մինան լաց էր լինում. եւ նրա հետ
լաց էր լինում Կյորեսի լեզուն:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Արձակագիր, դրամատուրգ, մանկավարժ, հասարակական գործիչ Հովհաննես Մալխասյանը ծնվել է 1866թ. սեպտեմբերի12-ին Ախալքալակի գավառի Սուլդա գյուղում, քահանա Մկրտիչ Մալխասյանի ընտանիքում: Նախնական գրագիտությունն ստացել է հայրենի գյուղում, շատ բան է սովորել հատկապես իր գրասեր հորից, այնուհետեւ ուսումը շարունակել է Ալեքսանդրապոլի ծխական դպրոցում: 1881թ. Մալխասյանն ընդունվել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանը, սակայն ուսումը դեռ չավարտած՝ ստիպված թողել է ճեմարանը. նրան ճեմարանից վտարել են աշակերտական խռովություններին մասնակցելու համար: Հետագայում նա հատուկ քննություն է հանձնել եւ ստացել ուսուցչի վկայական: 1887թ. Մալխասյանն սկսել է իր ուսուցչական գործունեությունը: Նա երկար տարիներ դասավանդել է կովկասի հայաբնակ քաղաքներում. մասնավորապես՝ Ախալցխայում եւ Ալեքսանդրապոլում: Նրա ուսուցչական գործունեության տարիները համընկան այն ժամանակահատվածի հետ, երբ ցարական սատրապ, Կովկասի կառավարչապետ Գոլիցինը մի վայրագ արշավանք էր սկսել հայկական դպրոցների վրա: Նպատակը հստակ էր՝ հայերին աքսորել Սիբիր եւ Հայաստանը բնակեցնել ռուս հնադավանների: Եւ, այդ ժամանակների մամուլի վկայությամբ, սատրապ Գոլիցինը սկսեց պաշտոնական ճանապարհով, օրենսդրական կարգով զրկել հայերին ամենատարրական իրավունքներից. փակեց հայոց դպրոցները, փակեց բարեգործական եւ կրթական հիմնարկությունները, գրադարանները եւ, ի վերջո, հասավ այն բանին, որ Նիկոլայ Երկրորդից հրաման բերեց եկեղեցապատկան կալվածքներն ու գումարները խլելու մասին... Եկել էր փութացնելու Կովկասի ռուսացումը, այդ պատճառով նրա համար ատելի էին ազգությունները, որոնք սեփական ազգային դիմագիծ ու արժեքներ ունեին նրան դիմադրելու համար, մասնավորապես հայերը, որոնց հանդեպ նրա ատելությունը կատաղության էր հասնում: Նշանակվելով Կովկասի կառավարչապետ, նա հայտարա-

րեց, թե պիտի արմատախիլ անել հայկական հարցը, հետո բանը հասավ այն ասպիճանի, որ Գոլիցինը անհանդուրժելի էր համարում, որ հայ ժողովուրդ է ապրում աշխարհի վրա...

Գոլիցինի վարչակարգից եւ նրա ոստիկանների անօրինական, վայրագ գործողություններից բազմիցս տուժած Ջիվանին, որի ապրուստի միակ միջոցը՝ ջութակը, գալիս խլում էին ձեռքից, այդ օրերի մասին գրում է.

Ո՞ւր գնամ, որ չտեսնեմ ես,
Անգութ ոստիկանի երես...

Եւ ահա քաղաքական մռքի ու գործելակերպի այս թնջուկում, երբ ոչ մեկը ապահովագրված չէր դիպվածի սանձից փախած քմահաճույքից, հայտնվել էր նաեւ Հովհաննես Մալխասյանը: Դպրոցները փակելուց հետո ընտանիքի հոգսը հարկադրում է Մալխասյանին սովորել հաշվապահական գործ եւ երկար տարիներ՝ շուրջ 31 տարի հաշվապահություն անել նախ Թիֆլիսում՝ հայտնի առեւտրականներ Սեյլանով եղբայրների մոտ, այնուհետեւ նաեւ Երեւանում: Բայց նրա միտքը միշտ դպրոցի եւ գրականության հետ էր: Հայկական դպրոցներ փակելու շրջանը ծանր է տպավորվում Մալխասյանի հիշողության մեջ, որը հետագայում գրում է.

Թե դժգույն դեմքով, հին շորեր հագած
Չորացած ձեռքում թղթերի ծրար
Գնում է գլուխը կրծքին խոնարհած՝
Գիտցիր՝ որ աղքատ ուուցիչն է այն:

1903թ. ցարական կառավարությունը Մալխասյանին աքսորում է Նոր Նախիջեւան, ապա՝ Ռուսաստանի խորքերը: 1905-ին վերադառնալով Թիֆլիս՝ ծավալում է մանկավարժական-հասարակական գործունեություն: Այդ ընթացքում իր հայրենի Սուլդա գյուղում հիմնում է դպրոց եւ բարեգործական ընկերություն, պարբերական մամուլում («Մուրճ», «Նոր դար») անդրադառնում է ժամանակի հրատապ հարցերին: 1907-09-ին Նոր Նախիջեւանում հրատարակում է «Մեր ձայնը» օրաթերթը: Շատ արագ օրաթերթի շուրջն են հավաքվում ժամանակի մտավորականներից շատերը: Մալխասյանը Նոր Նախիջեւան է հրավիրում նաեւ Նար-Դոսին, ում հետ վաղուց նամակագրական կապի մեջ էր: Պահպանվել են Նար-Դոսի բազմաթիվ նամակները՝ ուղղված իր բարեկամին: Բայց այդ ամենը երկար չի տեւում. հակացարական հոդվածներ տպագրելու համար 1909-ին Մալխասյանը նորից բանտարկվում է: 1914թ. Մալխասյանը տեղափոխվում է Թիֆլիս, ուր եւ ծավալում է գրական-հասարակական արդյունավետ գործունեություն:

Արգասաբեր է եղել Մալխասյանի գրական գործունեությունը: Նրա պատմվածքներն ու վավերագիր պատումները իր ժամանակի ընկերային հարաբերությունների յուրօրինակ արտացոլքն էին, ընկերային ճնշման ու շահագործման, տգիտության ու հետամնացության տարուբերումների կենդանի թիթեռները: Իսկ այդ կյանքի միջավայրը գյուղն էր, կերպարը՝ գյուղացին: Սկսած «Ջավախքի երազը» խոհական-քնարական պատկերից, վերջացրած «Հորոտ-Մորոտի» ավարտական գունապատկերով, իր նիրհող հեռուներից կարծես վերարթնանում ու աչքառաջ է գալիս ժամանակի հին չափում-

ներում գոյատեւող նահապետական ջավախքցին՝ իր խոհերով ու երազանքներով, հոգու կարճատեւ ցնծությամբ ու տառապանքի թանձրությամբ:

Երկար ձմեռների երկիր է Ջավախքը: Ճերմակ հավերժությունը ծանրափեշ նստում ու Ջավախքի նահապետական գյուղերը կտրում էր մեծ աշխարհի հետ հաղորդակցվելու հեռանկարից: Եւ միապաղաղության ձանձրույթը խրատում ու տեւական թախիծ էր դառնում հոգեմաշ սպասման մեջ: Մարդկանց բորբոք երեւակայությունը ամռան արեւի ջերմության վերհուշում պատկերներ հյուսում ու ձմռան սառույցը հալում էր, եւ ձմռան ճերմակ օրը թեւավորվում, թռչում էր ձնհալի տաք հորիզոնից այն կողմ: Եթե անգամ նրանց երեւակայությունը կաղ էլ լիներ, գյուղ ժամանող աշուղների երեւակայությունը հաստատ ձիավոր էր: Քաղաքակիրթ աշխարհների ժամացույցները դեռ գալիք ժամանակների հեռուներում էին, եւ գյուղի կեղեւը դեռ անթափանցելիորեն էր ադաթավոր օտար թաց ու չորի հանդեպ: Ուրեմն ձմռան պարապ ձանձրույթը ցրողը դարձյալ աշուղներն էին լինելու: Նրանք գալիս էին ու գյուղացիների համար սկսվում էր մեծ հեքիաթի ձմեռը: Հայերենը թուրքերենով պղտորած, թուրքերենը հայերենով համեմած խառը բայաթին թառի ծլծլոցի տակ ծորում ու օդաների նեղվածքներում հավաքվածների նահապետական միտքը սեւեռում էր արեւելյան շողշողուն սիրավեպերի վրա, եւ դարի պես երկար ձմռան գիշերը աննկատ հալվում, լուսանում էր լամպի լույսի տակ...

Աշուղների ներկայությունից անմասն չէին նաեւ տաք ու արեւոտ օրերը. գյուղացիների ուրախությունները զարդարողներն ու տխրությունները մեղմացնողները դարձյալ աշուղներն էին՝ իրենց խմբերով: Մալխասյանի մանկությունը հենց այդ միջավայրում էր անցնում, եւ աշուղների թեւավոր պատումները չէին կարող խոհի գալար չդառնալ սուր միտք ու վառ երեւակայություն ունեցող պատանու համար: Հետագայում նա հենց ինքն է իր «Նոխազը» պատմվածքում վկայում այդ մասին: Պատմվածքի մի հատվածում, որտեղ նկարագրվում է կերուխումի տեսարան, Մալխասյանը գրում է. «Քեֆ էին անում, մի չեղած քեֆ. ուտում էին նոր մորթած թուշի գառան միսը, վրայից խմում կարմիր գինին, վայելում կարագն ու սերը, ձուն ու մածունը, մեղրն ու սերուցքը...Վերջապես, խրախճանքը հասավ այն աստիճանի, երբ ճրագներն արդեն վառել էին, դրսում ձեռք ու ոտքը քաշվել, նրանք կանչել տվին աշուղ Սիայուն (մեծն Ջիվանու ուսուցչին - Վ. Ս.) սազ ածելու...»

Գյուղական միջավայրում, երբ թվում է, թե միջմարդկային հարաբերություններում հոգեբանական բարդ շրջադարձներ չեն արձանագրվում, եւ մարդկային պարզ հարաբերությունները ավելի շատ մակերեսային-ծանծաղ բնույթ են կրում, արձանագիր Մալխասյանի համար, այնուամենայնիվ, կեցության խորքերը նկատելի են դառնում, որոնք գեղարվեստորեն պատկերվում ու բացապարզվում են տեսանելի-թափանցիկ խտացումներով: Արձակագրի այդ հմտությունը գրեթե առկա է նրա բոլոր գործերում: Նա իր պատմվածքների պարզ պատումների մեջ թանձր գույներով է ներկայացնում խավար ժամանակների սարսափներն ու գյուղական իրականության մեջ խմորվող հարաբերությունների բնութագրական տարուբերումները: Ուժեղի եւ թույլի, բարոյականի եւ անբարոյականի, օրինավորի եւ անօրենի, խղճավորի եւ անխիղճի դարավոր հակադրությունների մի յուրօրինակ խճանկար է «Աղքատության ճիրաններում կամ մարապա» պատմ-

վածքը (մարապա - ուրիշի դռանը ճորտ, ծառա): Այստեղ մեկտեղված ու միահյուսված են քարանձավային բնագդներով առաջնորդվողների ներնգաբարո վարքն ու իրենց բախտի ձեռքը կրակն ընկած թշվառների ջրապար անհուսությունը: Մալխասյանը պատկերային մանրամասներով նկարագրում է, թե խավարամտության թանձրույթում ճարպակալած մեկը ինչ հրճվանքով է սպառացնում, ծաղրում մեկ ուրիշին՝ թույլին, տկարին, անպաշտպանին, խլում նրա ունեցվածքը, վերջին հույսը, նրան մատնելով աղքատության ու սովի: Մնում է մի ելք՝ թողնել տունուտեղը եւ գնալ ճորտություն անել մի որեւէ ունեւորի դռանը: Այդպես են վարվում նաեւ իրենց վերջին հույսը կորցրած Քերոբ եւ Սերոբ եղբայրները: Դաժան է պատմվածքի ավարտը.

«-Էլ ի՞նչ ճար ու ճամփա ունենք, - աչքերը քամեց Քերոբը, - վե՞վ մեզի էլ մալ կուտա, որ լծենք, հաց կուտա, որ ցանենք, ուտելիք էնենք... Ճարը կտրած երկուսս էլ մշակ պիտի մտնենք...է, երկուսս էլ մշակ մտնինք, տնեն հեռանանք՝ տո՞ւնն ում թողնինք...

Սերոբը գլուխն առավ երկու ձեռքի մեջ, կարոտակեզ աչքերով նայեց օջախում ծխացող աթարին:

-Տան համար էլ իտարա (սնունդ) հարկավո՞ր է, թե չէ՞... Խո տարին տասներկու ամիս չփլախ (մերկ) պահել չիլլի... Էնոնք էլ մեղք են...

-Դու գիտես, ափար ջան, - ձայնեց Սերոբը եւ երեսը շրջեց:

Սուրբ Հարությանը, մարդկությունը սրտով ու կյանքով նորմեկ գարնան հետ վերածնության օրերին, երբ ամեն մարդ կարմիր ձվով էր շնորհավորում գոմեշի ճակատը, որ դաշտ դուրս գա, վարուցանք անե, հուսո նոր դռներ բանա՝ մարապոնց երկու եղբոր տան դուռն էր փակվում... Նրանք տանն ինչ որ կար-չկար կոռնի սայլին էին բառնում, որ գնային Մ.... գյուղի աղալարի դուռը մարապա...

Երբ բոլոր իրերը բարձին, պրծան, սեւ քարերով վեր շարեցին դուռն եւ, վերջին անգամ համբուրելով շեմքն, ասացին.

-Մնաս բարով, հոր օջախ...»:

Նկատենք, որ իր պարզ պատումներում Մալխասյանը բավական հմտորեն է կարողանում նկարագրածը տեսանելի դարձնել՝ ժամանակին բնորոշ հոգեբանական վրձնահարվածներով, նահապետական գյուղի մարդկանց մեջ խմորվող անմարդկային հարաբերություններով, նրանց ճակատագրի թանձրացումները բացապարզող կառուցվածքային լուծումներով: Կյանքի հակաբեւեռներում հայտնվածների՝ հոգեցեց բռնակալների եւ նրանց խեղճուկրակ զոհերի հարաբերություններից հյուսված պատումները մի տեսակ մուկ ու կատվի խաղ են հիշեցնում՝ մեկի համար խավարամիտ հնարքներով զվարճանք, մյուսի համար՝ տառապանքի կնճիռ: Տարբեր գոյավիճակներում հայտնվածների միջեւ այդ ներհակությունն առկա է նրա «Հորոտ-Մորոտ» պատմվածաշարի գրեթե բոլոր գործերում: Մալխասյանը լավ գիտե գյուղը, գյուղացուն, նրա հոգսերն ու մտածումները, նրա կեցության մութ խորշերում բույն դրած տառապանքի չափը: Լավ գիտե գյուղի աղաներին, նրանց բիրտ ու եսակենտրոն հոգեբանությունը, երեւակայության սահմանները: «Գյուղի աղան» պատմվածքում մի երկիռատություն կա, որն իր խորքային բովանդակությամբ ու ժամանակներին բնորոշ խտացումով բնութագրական է նրա գրվածքների

համար: Ահա մի հարված գյուղի աղայի եւ թշվառության ճիրաններում ջլատվող Պլեճ ամու միջեւ կայացած այդ երկխոսությունից.

«-Էս ի՞նչ գարի է, - թեճի գլխին կանգնելով թունալի հարց տվեց գեղի աղեն:

-Կտրեսնես, աղա ջան, էլ ի՞նչ ըսեմ:

-Էս ո՞րտեղի գարին է:

-Հոտեմազ երկու սել ունեի քաղած, մի սելը բերի, ծեծեցի:

-Բերիր ծեծեցիր, հա՞, հարամզադա... իրավո՞ւնք...

-Ի՞նչ էնեմ, աղա ջան, էս մի ամիս է՝ անհաց նստել ենք. տեսա, որ շատ ուշացար, գնացի բերի. ներող եղի, - աղերսանքով թոթովեց նա:

-Էս որ ամեն մարդ իրեն ուզածի պես երթա, առանց հրամանի բերե, ծեծե, ո՞ւր կհասնի, հա՞, ըսա:

-Է, ի՞նչ էնեի, խո անոթի նստիլ չիլլի. թե չես ուզե, որ առանց հրամանի բերենք՝ գեղը կեցի, իրավունք տու:

-Դու դեռ կհամարձակվիս իմ դեմ էդպես պատասխան տալ, հա՞, նզովված..., - եւ ինչպես մի հեւրին սրիկա այնպես բարձր ու անամոթ հայհոյեց գեղի աղեն, որ գեւրինը ոտքերի տակ ժաժ եկավ:

Աղի այդ կինտոյավարի հայհոյանքն այնպես ծանր ազդեց Պլեճ ամու սրտին, որ նրա մեջ վերստին ամեն բան շուռ եկավ:

-Ինչ որ ճշմարիտ է՝ էն կիտսիմ, ինչի՞ կքֆրդես, - այս անգամ հպարտությամբ խոսեց նա:

-Դե որ էդպես է, ես քու թեճդ կտրանիմ, դու գնը ճշմարիտը խոսի:

Խլել Պլեճ ամու ամբողջ թեճը, գրկել նրան միակ հույսից եւ նորից շաբաթներով մատնել քաղցածության նրա բազմանդամ գերդաստանին՝ դա նրա համար կատարյալ մահ էր»:

Ինչպես ժողովուրդն է ասում՝ տերովին տերն է տարել, անտերին՝ գելը. սկզբում գարու թեճի բռնագրավում, հետո ծեծուջարդ, սարքովի մեղադրանքներով բանտարկություն, ու վերջում՝ մահ:

Կարիքի ու հմտության հետ աստիճանաբար ավելի բազմակողմանի դարձավ Մալխասյանի գրական-հասարակական գործունեությունը: Ստեղծագործել է տարբեր ժանրերում՝ արձակ, չափածո, զբաղվել է ազգագրությամբ. նրա ազգագրական ու մի շարք բանասիրական ուսումնասիրությունները արժանավոր ավանդ են հայ մշակույթի պատմության մեջ: Հիշատակության արժանի են նրա «Ջավախեցին», «Դոիտբուրները Ախալքալակի գավառում», «Հայ գեղջուկի ալրոմը» եւ այլ հետաքրքրական գործեր: Գրել է գրաքննադատական հոդվածներ, հանդես է եկել նաեւ որպես դրամատուրգ. գրել է պիեսներ («Ավազի վրա», 1914, «Ծիլեր», «Կյանքի հեքիաթը», «Հիվանդանոց»), որոնք բեմադրվել են Թիֆլիսում: Մալխասյանի առաջին ծավալուն գործը «Երդում» (1895) վեպն է: Նրա ծավալուն գործերից են նաեւ ձեռագիր վիճակում կիսատ մնացած «Գոյության կռիվ» վիպակը, 1897 թ., «Անմեղ հոգին» վիպակը, 1929 թ., «Շողերը», 1926 թ., «Չալաղանը, կամ Հանգույց» վեպը, 1929 թ., «Երկու զույգ» վեպերը: Լույս են տեսել

նրա «Պատանեկան հուշեր» (1896) չափածո ժողովածուն, «Մեր բարեկամները» (1910) արձակ գրքույկը, «Հանցանք» (1913) էջյուղը, որ, ի դեպ, նվիրված է աշուղ Ջիվանիի հիշատակին: Ինչպես արդեն նշեցինք՝ գյուղական կյանքից վերցված պատմվածքների ժողովածու է «Հորոտ-Մորոտ»-ը (գիրք 1-4, 1898-1927, 2-րդ հրտ. 1959): Նար-Դոսի հետ կազմել ու հրատարակել է «Գիր եւ կյանք» (1911) մայրենի լեզվի դասագիրքը: Նրա ձեռագրերը պահպանվում են Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում: Մալխասյանը նաեւ թարգմանություններ է կատարել ռուս գրականությունից, թարգմանել է Ա. Ս. Պուշկինից, Մ. Յու. Լերմոնտովից եւ այլ հեղինակներից: Ուշագրավ է, որ նամակագրական կապ է ունեցել համաշխարհային գրականության հանճարի՝ Լեւ Տոլստոյի հետ եւ նրա հյուրն է եղել Յասնայա Պոլյանայում: Այդ հանդիպումից տպավորված ու հմայված Հովհ. Մալխասյանը իր հուշերում գրում է.

«...Այդ միջոցին դիմացի դուռը բացվեց եւ շեմքում երեւաց Լեւ Տոլստոյը: Նա էր՝ ինչպես միշտ կանգնած իմ երեւակայության մեջ: Ալ ծուփ մորուք, լայն, խորշոմած ճակատ, դյութիչ, քաղցրաժպիտ աչքեր, իր պատմական զգեստում՝ հասարակ վերնաշապիկ, կաշվե գոտի, համեստ կոշիկներ:

Վեր թռա տեղիցս, մոտեցա, սեղմեցի ձեռը եւ ոչինչ չասացի: Առ բոպե նայեցի իրեն, նայեցի սիրազեղորեն աչքերին: Այնտեղ վառվում էին դեպի մարդն ունեցած սիրո խանդն, ցոլում էին գորովի ու կորովի արյունը: Ռուսիայի ամենամեծ գրողն էր կանգնած իմ առաջ, մեծ գրողի ձեռն էի սեղմել, մեծ գրողի ափի մեջ էր իմ ձեռքը: Եւ նա իմ լուռ հայացքը հասկացավ ու, իմ ձեռը չարձակելով, առաջարկեց ինձ նստել, նստեց եւ ինքը»:

Մալխասյանը իր տեսակով մշակույթի իսկական նվիրյալ էր եւ իր որոշակի ներդրումն ունեցավ այդ մշակույթի զարգացման գործում:

ՎԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ